№ 11. Մարտի 22. — 1873 — Մարտի 22 № 11.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ.

Տարեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցեով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ".

Թիֆլիսում կարելի է ստորագրվել խմբագրատան մէջ (արծրուեան և պ. Թատուլեանցի խանութում)։

ՄՇԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ.

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հատարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւններ տպվումին Հայերէն, Ռուսերէն, Վրացերէն, Ֆրանսիարէն, Գերմաներէն և Թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ արվեստագործական ուսումնարան, — Ներքին տեսութիւն, վնասու ընկերութիւնների կանոնադրութիւն (շարք)։ Նամակ Երևանից, Ներքին լուրեր, — Արտաքին տեսութիւն, Հօլլանդիա, Ֆրանսիա, Իտալիա, Տաճկաստան, Նամակ Ամերիկայից, — Գրականն լուրեր, — Առևտրական, — Յայտարարութիւններ, — Բանասիրական։

ԱՐՋԵԱԼ ԱՐՈՒԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Մեր լրագրի 6-որդ համարում առաջարդող յօդվածում տեղին կայսերական ընտրութիւնից մշակված ծրագրի բովանդակութիւնը ըստ լսածին հաղորդելուց յետոյ, ինք հետևեալ հարց առաջարկեցինք՝ թէ ուշ մեր քաղաքային վարչութիւնը գաղափար է պահում այնպիսի պրօէկտը, որ վերաբերում է մեզ ամենքիս, որ քաղաքի բնակիչ է, քաղաքի փողով շինվող ուսումնարանը։ „Тифлисскій Вѣстникъ" լրագրից մենք տեղեկացանք, որ դիտաւորութիւն ունի բացի 10 հազար րուբլիից դարձեալ վերադրութեամբ էլ հաւաքել քաղաքի բնակիչներից մի յայտնի գումար մի և նոյն նպատակով։

Մենք յոյս ունէինք, որ եթէ ոչ քաղաքային վարչութիւնը, գոնէ նրանից նշանակած մասնաժողովը կը բարեհաճէ մեզ ասցնել պրօէկտի պատճէնը կամ տպել այն, որ մենք ծանօթանայինք հասարակական գործիքը նորա մէջ բովանդակված առարկութիւնների ու մտքերի հետ և քննենք այն, կամ վերջապէս հրաւիրէ լրագրութիւնները ներկայացուցիչներին ներկայ գտնվել նշանաժողովի նստերին ..։ Բայց մեր բոլոր յոյսը զուր անցաւ։

Ռուսաստանում չէ մտավանները հանձնում են լրագրութեանը իրանց պրօէկտները քննելու, ինչն կենդրօնական տէրութենից մշակվող պրօէկտները, շատ դիպվածներում, քննադատում է Պետերբուրգեան պրէսան... իսկ մենք ոչինչ միջոցով չենք կարող ստանալ մի որ և է տեխնիկական ընկերութենից մշակված պրօէկտը ու չենք կարող քաղաքային վարչութենից նշանակված մի որ և է մասնաժողովից պահանջելու, որ այն պրօէկտը, որ մեզ ամենքիս հետաքրքրում է, դուրս գայ տպագրութեան մէջ, կամ նրա պատճէնը տեղական ռուս, հայոց և վրաց խմբագրութիւններին ուղարկվի...

Մեր յօդվածը յարուցեց ուրիշ յօդվածներ։ Թիֆլիսում հրատարակվող ռուս „Тифлисскій Вѣстникъ" օգուտ քաղելով մեր յայտնած լուրերից, գլխաւորապէս երկու հարց է առաջարկում՝ միևը թէ ինչ լեզու տեխնիկային ընկերութեան պրօէկտի կարծիքով պիտի բանի աքսորված տեղական լիզուների տեղը և երկրորդ՝ թէ ինչ միջոցով պարոնները կը վճռեն մինչև այժմ անվճռած մնացած խնդիրը, կը հաշտեցնեն ան հաշտելին, աշխատելով միացնել կրօնքերը, որ իններորդ դարից սկսած ոչ որին աջողված չէր։

Եւ ահա „Кавказъ" լրագիրը հանդիսանում է պաշտպան տեխնիկային ընկերութեան պարոնների՝ А. М. ստորագրութեամբ ֆելիլիտօնը սովորեցնում է մեզ, որ մենք ռուսաց հպատակներ ենք, որ Ռուսաստանում տիրապետող կրօնքը ուղղափառութիւն է, որ Թիֆլիսը ռուսաց քաղաք է, որ ռուսերէն լեզուն հարկաւոր է, որովհետև նա տիրապետող լեզուն է, որով և բոլոր օրէնքներ են գրվում,—կարծես թէ մենք այս բոլոր ճշմարտութիւնները չը գիտէինք, կամ պ. А. М.-ից պակաս գիտէինք... Նոյն լրագրի հետևեալ համարներից մինի մէջ մի փոքրիկ ծանօթութիւն տպվեցաւ „մի անգամ տեխնիկային ընկերութեան" ստորագրութեամբ, որտեղ մեզ յայտնում են, որ տեղական լեզուները բոլորովին հարկաւոր չեն, որովհետև հիմնվող ուսումնարանը արվեստներ պիտի սովորեցնի և ոչ արևելեան լեզուների համալսարանի բաժին պիտի դառնայ... կարծես մենք այդ չը գիտէինք...

Բայց մենք մեր կողմից կարող ենք ասել, որ օրինաւոր պօլէմիկայի մէջ երբէք թոյլ տուած չէ հարցից շեղվել և մանաւանդ խառնել մանկավարժական և հասարակական խնդիրները՝ քաղաքական և կրօնական խնդիրները։

Մենք կարևան հարց ենք առաջարկում՝ ինչ նպատակով է հիմնվում Թիֆլիսի քաղաքային արվեստագործական ուսումնարանը։ Այն նպատակով չէ, որ տեղական արվեստներին նոր ուղղութիւն տրվի, որ նրանց միջոցները կատարելագործվին։ Եւ եթէ այդ նպատակով, սրա հետևանքը ինչ պիտի լինի,— այն չէ, որ ուսում առած երիտասարդ արվեստաւորները իրանց կողմից մտցնեն ամբոխի մէջ ստացած արվեստագիտական հմտութիւնները։

Եթէ այդպէս է, ինչպէս պիտի ազդեն նրանք բազմութեան, ամբոխի, ուսումնարանից դուրս ելած շրջաններին վրա, եթէ զուրկ կը մնան մայրենի լեզուից, որ պիտի լինի միջոց իրանց ստացած արվեստական հմտութիւնները իրանց նմաններին մէջ տարածելու։

Ներկայացնենք մեզ որ Թիֆլիսի ուսուցչական դպրոցը, որ նպատակ ունի պատրաստել ժողովրդական ուսուցիչներին, կարգելէր աշակերտներին իրանց մայրենի լեզուս սովորելուս,—և երիտասարդը ժողովրդական ուսուցիչ դառնալով, միջոց չէր ունենայ մտցնել իր կողմից ստացած հմտութիւնները ժողովրդի երեխաների մէջ, ինչն զուրկ լինելով մայրենի լեզվից, ուսաի և երեխաներին իր մտքերը նրանց համար հասկանալի լեզվով մեկնելու ընդունակութենից...

Նոյն կը պատահէ և արվեստագործական ուսումնարանի հետ։ Նրանից պատրաստած արվեստաւորուսուցիչները (այդ պիտի ուսումնարանի միակ նպատակ լինի անկարող կը յայտնվին մտցնել մասսայի մէջ իրանց սովորածը։ Ուրիշն պրօէկտը առաջարկում է պատրաստել ոչ թէ երկրիս ապագայ արվեստագործութեան համար աւելի կատարելագործված գործիչներ, ոչ թէ նոր զարկ տալ տեղական արվեստներին,—այլ մեր երկրի համար անպէտք, իր հմտութիւնները ամբոխին հաղորդելու անընդունակ տարրը, առանձնացած, խորթ, մեռած մարմին...

Չը մոռանանք, որ ինչպէս ուսուցչական, այնպէս և արվեստագործական դպրոցի միջով մեծ մասը երբէք անցնելու չէ, այլ միայն ընտրեալները.. իսկ ամբոխը միշտ ուսումնարանի պատերից դուրս կը մնայ։

Նրա վերա պիտի ազդենք, իսկ այդ միջոցներով նրա վրա երբէք ազդելու չենք...։ Ընդհակառակն գուցէ նրա համակրութիւնը կորցնելով, նրան մեզանից յետ կը մղենք։

—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՕՐԱՎԱՐ ՀՈՂ.

Բոլորակ դաշտի մէջ, ուր ցրուած էին չատ ու քար, գեղեցիկ—կանաչազարդ անտառի միջ, հպարտ կերպով վեր էր բարձրացել մի հոյակապ ամրոց, որ իւր մինարէթներով, աշտարակներով և սուր սուր ժանիքաւոր պարսպներով, բոլորայատումէր ասպետական փառքը նորա մէջ բնակուող իշխանի։

Այդ ամրոցը, իւր մարմարեայ ջրբուխներով, մշնդղոյն—ապահնազարդ սենեակներով, մշտակաչ տունկերով և ծաղիկներով հովանաւորուած մարմարիոններով, խիստ պատշաճաւոր կերպով հարմարեցրած էր պարսկական գեղատէր ճաշակի հայելութեանը։

Ամրոցը պատկանում էր Բիզայ-բէկին։

Ամրոցին մօտ գտնվող գիւղի Հայ կանայքը և աղջիկները վաղ առաւօտեան խումբով այնտեղ էին գալիս պարտէզները մաքրելու աւելորդ խոտերն ջնելու։ Եւ ամրոցի մանկահասակ իշխանը չատ անգամ հանակներ էր անում և զուարճանում էր նրա հետ։

Մի առաւօտ, երբ գործում էին կանայքը, յանարծ յայտնուեցաւ Բիզայ—բէկը։ Նա, պատյատ ձեմելիկներով, մօտեցաւ այն ածուին, ուր հայնակ աշխատում էր մի մանկահասակ կին։

—Ում կինն ես դու, հարցրուց բէկը քաղցութեամբ։

—Ձեր ծառայի, Մարտիրոսի կինն եմ, պատասխանեց նա կարմրելով։

—Ինչու այդպէս վատ հագնուած ես դու։

—Աղքատի հագուստը այդպէս է, տէր իմ։

—Ահա քեզ արծաթ, նոր հագուստներ գնիր քեզ համար։ Խօսեց բէկը առաջարկելով մի քանի ոսկի դրամներ։

Սօնան—այդպէս էր կնոջ անունը—չփոթուեցաւ։

—Ընդունիր այդ ոսկիները, կրկնեց բէկը։

—Ինչ պէտք է, տէր իմ, ինձ նոր հագուստը, երբ ես ամէն օր մշակութեան մէջ եմ ապրում, պատասխանեց Սօնան հրաժարուելով։

—Ես կը հրամայեմ քեզ չաշխատացնել մշակութեան մէջ, և քեզ միջոցներ կը տամ ապրելու, որպէս մի տիկին։

—Ես չեմ կարող չօգնել իմ տղամարդին։

—Դորանից նոյնպէս կազատեմ քեզ։

Կինը ոչինչ չը պատասխանեց։

—Ջե՞ս ընդունում այդ ոսկիքը։

—Չեմ կարող։

—Ինչու։

—Այնպէս, չեմ կարող...

***

Սօնան և իր ամուսինը Մարտիրոսը աղքատ գիւղացիք էին։ Նոցա բոլոր հարստութիւնը բաղկացած էր մի զոյգ այծերից, որոց կաթնով ապրում էին նորա, մի ճախարակից, որով Սօնան պատրաստում էր մի մանկահասակ կին։ պատրաստում էր մի մանկահասակ կին։

տիրոսը, ուժին դրած, գնումէր գէպի գիւղամէջը, և այնքան ժիզը ծռած կանգնումէր այնտեղ, մինչև նորա դրացիներից մինը, մի քանի ապատի վճարելով, վայձում էր նորան, և ամբողջ օրը բանեցնումէր իւր մշակութեան դաշտերում։"

Այդպիսի դառն աշխատութեամբ գարձեալ գոհ էին նորա, երբ կարօղանում էին իւրեանց խրճիթի մէջ հանգիստ քուն վայելել։ Իսկ այդ բանաը խիստ սակաւ էր յաջողվում նորանց։

Մի օր Մարտիրոսին իւր մօտ կանչեց գիւղատէր խանի որդին Բիզայ բէկը, որ իւր հօր վախճանից յետոյ կառավարումէր նորա կալուածները։

Երկիւղից խեղճ գիւղացու չունչը կտրուեցաւ, մինչև խանի որդուց մօտ հասնելը, բայց տեսնելով նորա ուրախ դէմքը, մի փոքր ոգի ստացաւ, և մինչև գետին խոնարհուելով, երկրպագեց նորան։

—Ինչ գործով պարապվում ես դու, Մարտիրոս հարցրուց նորանից Բիզայ-բէկը։

—Աղքատի պարապմունքը ինչ պէտք է լինի տէր, ոտացդ մոխիր դառնամ, օր գադում եմ, օ ուտում եմ։ Պատասխանեց գիւղացին կրկին գլուխ տալով։

—Դու ուժեղ և առողջ տղամարդ ես, Մարտիրոս, դու կարող ես ունենալ քո արօրը, և ցուլերը ու պարապուես հողագործութեամբ։

Մարտիրոսը, չը դադարկելով գլուխ տալուց, պատասխանեց.—Ես աղքատ մարդ եմ, աղայ, քեզ պատաղ դառնամ։

—Ցիմար, հպարտութեամբ գիւղացու խօսքը կրեց բէկը. իմ հպատակ հայերից ոչ է հարուստ, բայց ես տալիս եմ նորանց հող, սերմ և ամէն պարագայք, որք հարկաւոր են վարուցանքի և նոքա դորանով ապրում են։

—Դուք միշտ ողորմած էք գէպի ձեր ծառայները, տէր իմ։

—Ես քեզ նոյն նպատակաւ կանչեցի ինձ մօտ, ես գիտեմ, որ դու աշխատասէր մարդ ես, չեմ կամենում, որ աղքատ ապրես, գնա, տանուտիրոջ մօտ, ես հրամայում եմ նորան տալ քեզ բոլոր պիտոյքները վարուցանքի համար։

—Աստուած քեզ երկար կեանք տայ աղայ, Աստուած իմ կեանքից կտրէ ձերի վերայ աւելացնէ։ Ասաց գիւղացին և չնորհակալութեամբ հեռացաւ։

***

Գարնան սկիզբն էր։

Մարտիրոսի երդի ձայնը արդէն լսելի էր լինում դաշտից, ուր նա հերկումէր իւր օրավարը։

Քանի չաթմից յետոյ նորա ցանքը սկսաւ բուսանել, կանաչել և աճել, բայց նորա հետ անդադար աճում և բազմանում էր տուկոսը նորա պարտատոմսակի, որ տուել էր նա խանի որդուն։

Անցաւ ամառը, եկաւ աշունքը։ Մարտիրոսը հնձեց իւր արտը, կալը կատեց և գուտ ցորնի չեղջը կիտած էր նորա կալի մէջ։ Նա ուրախութեամբ նայում էր իւր հունձքի պտղաբերութեան վերայ, չը մտածելով, որ այդ չէր պատկանում նորան։

Եկաւ կալուածատիրոջ գործակալը, ցորեանը